ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

№ Ե/39/927-25 «17» 12 2025թ.

«ԱԼԵՌՏՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
/հասցե՝ ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ
էլ. հասցե՝ info@alerto.am/

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Ալեռտո» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի ապրիլի 28-ին կնքված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացվել են ֆինանսական միջոցներ և սույն թվականի հոկտեմբերի 01-ին կնքվել է համաձայնագիր, սակայն Ձեր կողմից սահմանված ժամկետում մինչև սույն թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ 7-10-րդ չափաբաժինների մասով մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Ձեր կողմից 2025թ. դեկտեմբերի 12-ին ներկայացված N ՄԳ/1110-25 գրությունը՝ հայտնում ենք, որ 2025 թվականի դեկտեմբերի 17-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 382,500.00 (երեք հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 255,000.00 (երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ

տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)